Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-637-11.07.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետեւ՝ Օրենսգիրք) 106.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 106.1. Հեռավար աշխատանք

1. Հեռավար աշխատանքն աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարումն է առանց աշխատանքի վայր ներկայանալու:

2. Հեռավար աշխատանքը կատարվում է աշխատողի եւ գործատուի (անկախ սեփականության ձեւից եւ կազմակերպաիրավական տեսակից) փոխադարձ համաձայնությամբ, եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս այն կատարել նաեւ հեռավար եղանակով:

3. Աշխատանքը հեռավար կատարելու մասին կողմերի համաձայնությունը ձեւակերպվում է գրավոր, որն աշխատանքի էական պայմանների փոփոխություն չի համարվում:

4. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, երբ այդ դեպքերով պայմանավորված հնարավոր չէ ապահովել աշխատողի կողմից իր աշխատանքային

պարտականությունների կատարումն աշխատանքի վայրում, աշխատանքը կատարվում է հեռավար:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամանակահատվածներում աշխատանքային պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, այդ թվում՝ հեռավար եղանակով, գործատուն աշխատողի պահանջով տրամադրում է ամենամյա արձակուրդ (առկայության դեպքում): Եթե աշխատողը չի պահանջում իրեն տրամադրել ամենամյա արձակուրդ կամ չունի ամենամյա արձակուրդի չօգտագործված օրեր, աշխատողը համարվում է սույն օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ոչ աշխատողի մեղքով պարապուրդի մեջ:

6. Հեռավար աշխատանքի իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաեւ անհրաժեշտ սարքավորումների, նյութերի կամ դրանց ձեռք բերման հետ կապված ծախսերի փոխհատուցման վերաբերալ հարցերը որոշվում են կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի ներքին կարգապահական կանոններով կամ կողմերի գրավոր համաձայնությամբ:

7. Աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով կատարելու ժամանակահատվածում աշխատողը պետք է ապահովի աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաեւ գործատուի համար իր հասանելիությունը՝ փոխադարձ համաձայնեցված եղանակով: Աշխատողի մեղքով սույն մասով սահմանված պահանջի չկատարումը համարվում է աշխատանքային կարգապահության խախտում:

8. Հեռավար աշխատանքի դեպքում գործատուի վրա չեն տարածվում աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանման նորմերի պահանջները, բացառությամբ անհատական պաշտպանության միջոցներով աշխատողներին ապահովման պահանջների:

9. Գործատուի մոտ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հեռավար աշխատող օտարերկրացիների վրա սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը չի տարածվում:

10. Աշխատանքի հեռավար կատարումը հիմք չէ աշխատողի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու երաշխիքները սահմանափակելու համար:

11. Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս հեռավար աշխատանք կատարելու դեպքում՝ աշխատանքի վայր ներկայանալու հետ կապված ծախսերի հատուցման կարգը սահմանվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, որն աշխատողի համար չի համարվում սույն օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված գործուղում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 187.1-ին հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված աշխատանքային պայմանագրերով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերով) ծագած եւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շարունակվող աշխատանքային հարաբերությունների վրա:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-637-11.07.2023-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետեւ՝ Օրենսգիրք) 106.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 106.1. Հեռավար աշխատանք

1. Հեռավար աշխատանքն աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարումն է առանց աշխատանքի վայր ներկայանալու:

2. Հեռավար աշխատանքը կատարվում է աշխատողի եւ գործատուի (անկախ սեփականության ձեւից եւ կազմակերպաիրավական տեսակից) փոխադարձ համաձայնությամբ, եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս այն կատարել նաեւ հեռավար եղանակով:

3. Աշխատանքը հեռավար կատարելու մասին կողմերի համաձայնությունը ձեւակերպվում է գրավոր, որն աշխատանքի էական պայմանների փոփոխություն չի համարվում:

4. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, երբ այդ դեպքերով պայմանավորված հնարավոր չէ ապահովել աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունների կատարումն աշխատանքի վայրում, աշխատանքը կատարվում է հեռավար:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամանակահատվածներում աշխատանքային պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, այդ թվում՝ հեռավար եղանակով, գործատուն աշխատողի պահանջով տրամադրում է ամենամյա արձակուրդ (առկայության դեպքում): Եթե աշխատողը չի պահանջում իրեն տրամադրել ամենամյա արձակուրդ կամ չունի ամենամյա արձակուրդի չօգտագործված օրեր, աշխատողը

համարվում է սույն օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ոչ աշխատողի մեղքով պարապուրդի մեջ:

6. Հեռավար աշխատանքի իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաեւ անհրաժեշտ սարքավորումների, նյութերի կամ դրանց ձեռք բերման հետ կապված ծախսերի փոխհատուցման վերաբերալ հարցերը որոշվում են ~~գործատուի ու աշխատողի գրավոր համաձայնությամբ~~ կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի ներքին կարգապահական կանոններով կամ կողմերի գրավոր համաձայնությամբ:

7. Աշխատանքային պարտականությունները հեռավար եղանակով կատարելու ժամանակահատվածում աշխատողը պետք է ապահովի աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաեւ գործատուի համար իր հասանելիությունը՝ փոխադարձ համաձայնեցված եղանակով: Աշխատողի մեղքով սույն մասով սահմանված պահանջի չկատարումը համարվում է աշխատանքային կարգապահության խախտում:

8. Հեռավար աշխատանքի դեպքում գործատուի վրա չեն տարածվում աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանման նորմերի պահանջները, բացառությամբ ~~կոլեկտիվ կամ~~ անհատական պաշտպանության միջոցներով աշխատողներին ապահովման պահանջների:

9. ~~Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հիմնարկում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված առանձնացված ստորաբաժանումներում կամ հիմնարկներում~~

Գործատուի մոտ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հեռավար աշխատող օտարերկրացիների վրա սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը չի տարածվում:

10. Աշխատանքի հեռավար կատարումը հիմք չէ աշխատողի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու երաշխիքները սահմանափակելու համար:

11. Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս հեռավար աշխատանք կատարելու դեպքում՝ աշխատանքի վայր ներկայանալու հետ կապված ծախսերի հատուցման կարգը սահմանվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, որն աշխատողի համար չի համարվում սույն օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված գործուղում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 187.1-ին հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված աշխատանքային պայմանագրերով ~~(աշխատանքի ընդունելու~~ (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերով) ծագած եւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շարունակվող աշխատանքային հարաբերությունների վրա:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-637-11.07.2023-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 5-րդ մաս	**Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.** **«Եթե աշխատողը չի պահանջում**	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:**	**Ընդունվել է:**

			իրեն տրամադրել ամենամյա արձակուրդ կամ չունի ամենամյա արձակուրդի չօգտագործված օրեր, աշխատողը համարվում է սույն օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ոչ աշխատողի մեղքով պարապուրդի մեջ:»: *Սույն առաջարկության իրացումը ունի հստակեցնող նշանակություն: Նախագծի տվյալ կարգավորմամբ խոսքը վերաբերում էր այն դեպքերին, երբ աշխատողներն ունեն չօգտագործված արձակուրդի օրեր, ցանկանում են օգտագործել իրենց չօգտագործված արձակուրդի օրերը և պահանջում են գործատուից, որպեսզի իրենց տրամադրվի արձակուրդ: «Աշխատողի պահանջի» դեպքում նորմը իմպերատիվ էր նախատեսված, որպեսզի գործատուն տվյալ դեպքում պարտադիր*		

			տրամադրի այն: Միաժամանակ, այն դեպքերում, երբ աշխատողները չէին ունենա չօգտագործված ամենամյա արձակուրդի օրեր կամ չէին ցանկանա, որպեսզի իրենց տրամադրվի իրենց չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերը, ապա տվյալ դեպքում գործ կունենայինք ոչ աշխատողի մեղքով պարապուրդի հետ, որը կարգավորված է Օրենսգրքի 107-րդ և 186-րդ հոդվածներով: Այնուամենայնիվ, քանի որ հարցադրումներն այս մասով շատ են ներկայացվում, հետագա տարընկալումներից խուսափելու համար առաջարկվում է վերը նշված նոր նախադասությունը լրացնել նախագծի վերը նշված կարգավորման մեջ:		
2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նոր	**Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-**	**Ընդունվել է: Կատարվել է**	**Ընդունվել է:**

		խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 6-րդ մաս	**ին հոդվածի 6-րդ մասի «գործատուի ու աշխատողի գրավոր համաձայնությամբ» բառերը փոխարինել «կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի ներքին կարգապահական կանոններով կամ կողմերի գրավոր համաձայնությամբ» բառերով:** *Սույն առաջարկի իրացմամբ կապահովվեն հեռավար եղանակով աշխատանքի կազմակերպման առավել ճկուն ընթացակարգեր, քան մինչ լրամշակված տարբերակն է:*	**համապատասխան փոփոխությունը:**	
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 8-րդ մաս	**Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 8-րդ մասից հանել «կոլեկտիվ կամ» բառերը:** *Սույն առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հեռավար աշխատանքի դեպքում, ըստ*	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:**	**Ընդունվել է:**

			ամենայնի, աշխատողին կոլեկտիվ պաշտպանության միջոցներով ապահովելու անհրաժեշտություն առկա չի լինի:		
4.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի՝ նոր լրացվող 11-րդ մաս	**Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.** **«11. Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս հեռավար աշխատանք կատարելու դեպքում՝ աշխատանքի վայր ներկայանալու հետ կապված ծախսերի հատուցման կարգը սահմանվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, որն աշխատողի համար չի համարվում սույն օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված գործուղում:»:** *Սույն առաջարկի իրացման*	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:**	**Ընդունվել է:**

			անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ, եթե հեռավար աշխատանքը կատարվի այլ պետությունում կամ աշխատանքի վայրից հեռու՝ այլ վայրում աշխատանքի վայր ժամանելու հետ կապված ծախսերը հատուցելու կարգը սահմանվեն կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև, որ նման դեպքերում հնարավոր ծախսերը հստակ տարանջատվեն գործուղման ծախսերից: Հարկ է նկատել, որ վերջինս հստակ սահմանված է Կառավարության 29.12.2005 N 2335-Ն որոշմամբ:		
5.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	**Նախագծի 3-րդ հոդվածի «(աշխատանքի ընդունելու» բառերը փոխարինել «(կամ աշխատանքի ընդունման» բառերով:** *Սույն առաջարկը*	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:**	**Ընդունվել է:**

			խմբագրական բնույթի է և ներկայացվում է՝ հաշվի առնելով Աշխատանքային օրենսգրքում կիրառվող եզրույթները:		
6.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 9-րդ մաս	**Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 106.1-ին հոդվածի 9-րդ մասի** «Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հիմնարկում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված առանձնացված	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			ստորաբաժանումներում կամ հիմնարկներում» բառերը փոխարինել «Գործատուի մոտ» բառերով:		

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**